# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՁՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզիԿաթնաջուր համայնք, ՀՀ Լոռու մարզ, գ.Կաթնաջուր, 13 փող. 1, Հեռ. (099) 000302 ,
katnajur.lori@mta.gov.am

ԿԳԵ-319

14 հոկտեմբեր *2021թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ ՊԱՐՈՆ**
**ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Խաչատրյան

Կից Ձեզ եմ ներկայացնում, ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի ավագանու 2021 թվականի հոկտեմբերի 15-ին կայանալիք նիստի օրակարգը:

10/14/2021

X 

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ՊԱՊՈՅԱՆ

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի ավագանու նիստերի և համայնքային նշանակության այլ միջոցառումների (ՏԻՄ-երի ասուլիսներ, հանրային քննարկումներ) առցանց հեռարձակումների վերաբերյալ

14.10.2021թ. գ. Կաթնաջուր

| N | Համայնք | Միջոցառում | Օրը | Ժամը | Վայրը |
|---|---|---|---|---|---|
| 1 | Կաթնաջուր | Կաթնաջուր համայնքի ավագանու հերթական նիստ | 15.10.2021թ. | 10:00 | Կաթնաջրի համայնքապետարան 13 փողոց 1 շենք |

Նախագիծ
ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021Թ-Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021Թ-Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով,
Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է՝
Հաստատել Կաթնաջուր համայնքի ավագանու 2021թ.ի հոկտեմբերի 15-ի նիստի օրակարգը
Օրակարգ
Կաթնաջուր համայնքի ավագանու 2021թ.-ի հոկտեմբերի 15-ի նիստի

1. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին
2. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի 2021թ.-ի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումն ի գիտություն ընդունելու մասին
3. ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի 2021թ.-ի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին

Զեկուցող՝ Ա. Պապոյան

Նախագիծ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ
ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հուլիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրա նց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 16-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարը տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Զեկուցող՝ Ա. Պապոյան

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Կաթնաջուր համայնքի ավագանու
2021թվականի հոկտեմբերի 15-ի N _____-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ
ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ-Ի ԲՅՈՒՋԵԻՑ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Լարիսա Գառնիկի Հակոբյանին երեխայի ծննդյան կապակցությամբ հատկացնել օգնություն 20000 (քսան հազար) դրամի չափով
2. Նարա Ռոբերտի Մանուկյանին երեխայի ծննդյան կապակցությամբ հատկացնել օգնություն 20000 (քսան հազար) դրամի չափով
3. Նարինե Գարուշի Հարությունյանին երեխայի ծննդյան կապակցությամբ հատկացնել օգնություն 20000 (քսան հազար) դրամի չափով

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Վարդանյան

Նախագիծ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ
2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով և 33-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է.

1. Կաթնաջուր համայնքի ավագանու 2020թ.-ի դեկտեմբերի 25-ի թիվ 38-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն և շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն թիվ 1-ից թիվ 6 հատվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Զեկուցող՝ Ա. Պապոյան

Նախագիծ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2021թ.-ի ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկուցեց՝ Ա. Պապոյան

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38 հոդվածի 1-ին մասի 1 կետով և <<ՀՀ բյուջետային համակարգի մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1 կետի պահանջներով.

Կաթնաջուր համայնքի ավագանին որոշում է

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի հաղորդումը Կաթնաջուր համայնքի 2021թ.-ի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման մասին: